№ 152 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 14 1901 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 14 № 152

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լերմօնտովի յիշատակին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ախալքալաքից. Նամակ Բաթումից. Նամակ Զանգեզուրի գաւառից. Նամակ Սիմֆերօպոլից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԼԵՐՄՕՆՏՕՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Վաղը, կիրակի, յուլիսի 15-ին, Հիւսիսային Կովկասի Հանքային ջրերի շրջանում տեղի կունենայ մի Հանդէս։ Այն տեղում, Բեշթաու և Մաշուկ լեռների միջև, ուր վաթսուն տարի սրանից առաջ ռուս նշանաւոր բանաստեղծ Լերմօնտով մեռաւ մենամարտում, կը կանգնեցնվի յուշարձան բանաստեղծի յիշատակին։

Լերմօնտով առանձին համակրութիւն է վայելում մեր Կովկասի մէջ։ Բացի այն բանաստեղծական աչքի ընկնող տաղանդից, որի շնորհիւ նա համարվում է Ռուսաստանի առաջնակարգ բանաստեղծական ատաղերից մէկը, նա սիրելի է մեր երկրին և նրա ազգաբնակութեանը նրանով, որ նրա ստեղծագործութեան նիւթի նշանաւոր մասը վերցրած է Կովկասի բնութիւնից և նրա մէջ ապրող ազգերի կեանքից։ Նրա հռչակ ստացած «Դէմ» պօէման, նրա «Մեր Ժամանակի հերոսը» վիպասանական նկարագիրը, նրա «Մցիրի», «Հաջի Աբրէկ» և ուրիշ ոտանաւորները դարձրել են Լերմօնտովի անունը ժողովրդական Կովկասում և ամրացրել են նրա յիշատակը կովկասցիների սրտերում անջնջելի կերպով։

Անցել է վաթսուն տարի բանաստեղծի մահից յետոյ, իսկ նրա գրուածքները մինչև այժմ թարմ ոգեւորութիւն են ներշնչում կովկասցուն և կարդացվում են մեծ յափշտակութեամբ։ Լերմօնտովը կովկասեան բանաստեղծ է և կովկասցին նրան կը յիշէ յաւիտեան։

Այն ցաւալի դէպքը, որը պատճառ եղաւ բանաստեղծի վաղաժամ մահվան, այն է նրա 27 տարեկան հասակում, այն մենամարտը, որին նա զոհ գնաց, մինչև այժմ ցաւ և զայրոյթ են պատճառում բոլորին։ Այն դժբաղդ տեղը, ուր ընկաւ բանաստեղծը, դարձաւ պատմական մի տեղ, որը այցելում են նրա բոլոր այն յարգողները, որոնց վիճակվել է լինել հանքային ջրերի շրջանում։ Ինքը Լերմօնտով դատապարտել էր մենամարտը, երբ վերջինին զոհ գնաց Պուշկինը, բայց ինքն էլ չը կարողացաւ խուսափել նրանից և իր նշանաւոր նախորդի նման ընկաւ մենամարտողի հարուածից։

Ամբողջ Ռուսաստանի և Կովկասի հետ մենք կովկասեան հայերս տածում ենք խորին յարգանքի զգացմունքներ դէպի բանաստեղծի յիշատակը, որ իր տաղանդաւոր գրչով նկարագրեց և երգեց մեր Կովկասի բնութիւնը և նրա ժողովրդին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Մինչդեռ մեզանում գիւղատնտեսութիւնը օր օրի վրա քայքայվում է, մինչդեռ մեր գիւղացին գնալով աղքատանում է եւ հարկադրված է, լոկ ապրուստի համար, թողնել իր պարապմունքները եւ քաղաքների աղքատ ազգաբնակութեան թիւը մեծացնել,—արեւմտեան Եւրոպայում գիւղական ազգաբնակութիւնը ուղղակի հրաշքներ է գործում, աւելացնում է օր օրի վրա իր բարեկեցութիւնը, տնտեսական հարստութիւնը։ Ի՞նչպէս է նա հասնում այդ բարեբախտութեան։—Ինքնօգնութեան միջոցով։ Եւրոպայում գիւղացին վաղուց է դուրս եկել լակեան երեխայի դրութիւնից, վաղուց է սովորել իր բաղդը իր ձեռքով տնօրինելու ժամանակ։ Ըմբռնված է մեծ ճշմարտութիւնը, որ միութիւնը ոյժ է։ Եւ ահա այդ ոյժը գործադրվում է ամենալայն չափերով՝ բարօրութիւն ստեղծելու համար։ Պ. Վ. Տոտոմեան «С. Петер. Вѣд.» լրագրի մէջ ծանօթացնում է Դանիայի գիւղական ազգաբնակութեան մէջ զարգացած ինքնօգնութեան հետ։ Բացվում է մի հրաշալի պատկեր։

Մինչեւ 1865 թուականը—ասում է պ. Տոտոմեան—Դանիան մի չատ աղքատ երկիր էր եւ ունէր 1 միլիոն ազգաբնակութիւն։ Իսկ այժմ նա ցամաքային Եւրոպայի ամենահարուստ պետութիւնն է, ունի $2^1/_2$ միլիոն ազգաբնակութիւն եւ ամենից չատ, լուսաւորված, աշխատանքի ընդունակ, հոգատէր գիւղական ազգաբնակութիւն։ Այսքան անսովոր փոփոխութեան պատճառները, ի միջի այլոց, կազմում են ժողովրդական հաւասարաններ, գիւղատնտեսական կրթութիւնը, կօոպերատիվ ընկերութիւնները, արդիւնաբերութեան զարգացումը։

Գիւղատնտեսութիւնն էր, որ այնքան հարստացրեց այդ երկիրը։ Եւ գիտէք գիւղատնտեսութեան որ ճիւղը ամենամեծ հարստութիւնը բերեց։—կաթնատնտեսութիւնը։ Միայն կաթը մի անապառ աղբիւր է, որի շնորհիւ դանիական գիւղացին ապահով է, բարեկեցիկ։ Բայց նա երբէք այդպէս չէր լինի, եթէ մենակ լինէր, եթէ իւրաքանչիւր մէկը իր համար աշխատէր։ Միանալու գաղափարը կազմել տուեց գիւղացիներից ընկերակցութիւններ՝ հաւաքական ոյժերով կաթնատնտեսութիւնը առաջ տանելու համար։ Ներկայումս այդպիսի ընկերակցութիւնների (կօոպերացիա) թիւը 1000-ից աւել է, իսկ դրանց անդամների թիւը հասնում է 160,000-ի։ 1899 թ-ին միայն այդ ընկերակցութիւնների ձեռքով պատրաստված իւղից արտահանված է 65 միլիոն ռուբլու արժողութեամբ։

Կօոպերատիվ կաթնատնտեսութիւնը կազմակերպվում է հետեւեալ կերպով։ Բոլոր խոշոր եւ մանր գիւղացիները դառնում են կօոպերատիվ կաթնարանի ժամանակիցներ՝ հաւասար իրանց կովերի թւի եւ տարեկան տուած կաթի։ Մասնակցելու համար, բացի դրանից, տարին վճարվում է մօտ 50 կոպէկ իւրաքանչիւր գլուխ կովից։ Մի եւ նոյն ժամանակ գիւղացիները փայեր են դնում փոխառութեամբ, որ կարողութիւն է տալիս նրանց կաթնարանի շինութիւն կառուցանել։ Այսպիսի շինութիւնը սովորաբար նստում է 7—20 հազար ռուբլի եւ միայն մի կաթնարանը («Գաղէոս») նստել է գիւղացիներին մօտ 150,000 ռուբլի։ Կօոպերատիվ կաթնարանները բաղկացած են փառահեղ քարէ շինութիւններից եւ իրանց մեծ շոգեմեքենաներով նմանվում են գործարաններին... Կօոպերատիվ կաթնարանները առանձնապէս օգտակար են մանր գիւղական տնտեսութիւնների համար։ Երկու հատ կով ունեցող գիւղացին էլ արդէն հնարաւորութիւն ունի ձեռնտու գներով ծախել իր կաթը, ընկերակցութեան մէջ ժամանակցութիւն ունենալու պատճառով։ Առաջներում դանիական գիւղացիները չէին կարողանում մրցել կալուածատէրերի ագարակների հետ, իսկ այժմ խոշոր սեփականատէրերը աւելի ձեռնտու են համարում դառնալ մասնակից գիւղացիների հիմնած կաթնարաններին։

Միայն կաթը չէ, որ, ինքնօգնութեան այդքան խելացի կազմակերպութեան շնորհիւ, հարստութիւն է տալիս գիւղացուն։ Գիւղական տնտեսութեան ուրիշ ճիւղերում էլ նոյն զարմանալի արդիւնքներն է տալիս ընկերակցութեամբ գործելու սովորութիւնը։ Այսպէս են, օրինակ, հաւապահութիւնը եւ ձուերի առեւտուրը։ Ձուեր վաճառելու համար կազմված դանիական կօոպերացիան ունի բաժանմունքներ 364 զանազան տեղերում եւ բաղկացած է 19,000 անդամներից։ 1899 թ-ին այդ ընկերակցութիւնը գնել է իր անդամներից 2,496,000 կիլօգրամ ձու եւ վճարել է նրանց մօտ մի միլիոն ռուբլի։ Գոյութիւն ունեն, բացի դրանից, սպանդանոցների ընկերակցութիւններ, մթերքների վրա հսկող ընկերակցութիւններ եւ այլն։

Ահա ինչպէս է առաջադիմում, ինչպէս է իր շահերը պաշտպանում գիւղացին արեւմտեան Եւրոպայում։

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Յուլիսի 6-ին

Գիւղատնտես Ա. Սահակեան եւ մասնագէտ Սօկոլով, որոնք ներկայումս, ի միջի այլոց, զբաղված են մեր գիւղերում երեւացած վնասակար միջատների դէմ մաքառելու նպատակայարմար ձեւերը գտնելու գործով, այս օրերս երկրորդ անգամ այցելեցին մեր գաւառը։ Այստեղ գալուց յետոյ՝ նրանք իսկոյն գնացին Դիլիսկա գիւղը, ուր երեք օր դաշտերում դիտումներ եւ փորձեր անելուց յետոյ՝ այսօր վերադարձան քաղաք։ Վաղը պ. Սօկոլով կը մեկնի Բաթումի շրջանը, իսկ պ. Սահակեան մինչեւ յուլիսի վերջը կը մնայ մեր գաւառում եւ կայցել է միջատների շրջանում գտնված բոլոր գիւղերը—թէ դիտումներն ու փորձերը չարունակելու եւ թէ միջատների դէմ մաքառելու նպատակայարմար ձեւերը սովորեցնելու գիւղացիներին, մանաւանդ որ բզէզները չուտով պէտք է ձու դնեն, քանի որ կտրած բզէզների մէջ չատ սերմեր են գտնվել, եւ դուցէ աշնանը դրանց ոչնչացնող մակաբոյծի (պարազիտի) հետքերը գտնել, որ սովորաբար այս շրջանում է պատահում։

Ինչպէս պ. Սահակեանը հաղորդեց, Դիլիսկայի դաշտերում մեծ քանակութեամբ հացի բզէզ կայ, իսկ մլուկ չատ քիչ է պատահում, այն ինչ՝ գիւղացիների պատմելով՝ հեղեղներից առաջ բաւական եղել են։ Այս հանգամանքը պ. Սահակեանը բացատրում է մասամբ հեղեղներով, մասամբ էլ այն հանգամանքով, որ հիմա մլուկների բազմանալու շրջանն է, եւ, հաւանականօրէն, նրանք հիմա քիչ են հետաքրքրվում հացերով, այլ թաղնվում են զանազան տեղեր. ուրեմն դեռ չէ կարելի ասել, թէ մլուկները բոլորովին անհետացել են կամ անհետանալու վրա են։

Հացի բզէզը վերջերս է երեւացել մեծ բազմութեամբ, այնպէս որ հեղեղներից նրանք չէին կարող վնասվել։ Հիմա աշնանացան գարու արտերը հասնելու վրա են եւ այդ պատճառով ազատ են բզէզներից։ Աշնանացան հաճարի վրա բզէզներ կան եւ վնասում են, բայց ոչ այնքան, որքան անցեալ տարի։ Եթէ գարնանացան արտերը աճման այն շրջանին հասած լինէին, որ կարողանային բզէզներին սընունդի նիւթ տալ, անկասկած, նրանք հանգիստ կը թողնէին հաճարը եւ կարշաւէին դէպի գարնանացանը, որը մնունդի աւելի հեշտ միջոց է նրանց համար։ Մի շաբաթ յետոյ, երբ հաճարը հասնելու վրա կը լինի, իսկ գարնանացանի հասկերը նոր կը սկսեն լցվել, բզէզը հաճարից անշուշտ կը տեղափոխվի գարնանացան արտերը։ Այդ պատճառով հաճարը, հաւանական է, քիչ վնասվի, իսկ գարնանացան արտերը լուրջ կը վնասվեն։ Ուրեմն պէտք է գիւղացիներին համոզել, որ աշնան ցանքը սովորութիւն դարձնեն։

Ընդհանրապէս վերցրած, յոյս կայ, որ այս տարի միջատները աւելի քիչ վնաս հասցնեն՝ քան անցեալ տարի, որովհետեւ հիմա արտեր քիչ կան, մէկ էլ որ օդերեւոյթաբանական եւ այլ պայմանները այս տարի աւելի նպաստաւոր են եղել արտերի համար, իսկ միջատների համար, ընդհակառակը, աւելի վնասակար են եղել. ժանգ էլ չը կայ արտերի վրա։ Այս հանգամանքները աւելի քան համոզեցուցիչ են, որ վնասակար միջատների դէմ կարելի է կուել միայն կուլտուրական միջոցներով, այն է՝ հողը պարարտացնելով, լաւ մշակելով, սերմը ազնւացնելով, մի եւ նոյն տափում փոփոխակի զանազան բոյսերի սերմեր ցանելով (плодосмѣнъ), չուտ ցանելով եւ այլն։ Արմատական միջոց դա է։

Բայց եւ այնպէս, պ. Ա. Սահակեան գիւղացիներին խորհուրդ է տուել բզէզները ժողովել արտերից եւ ոչնչացնել։ Դա, ի հարկէ, արմատական միջոց չէ, բայց այդ ձեւով կարելի է վնասը թեթեւացնել, գոնէ աշնանացան արտերում, մանաւանդ, որ արտերը քիչ են եւ գիւղացիները հեշտութեամբ կարող են այդ բանը հասցնել։ Գիւղացիներից ոմանք իսկոյն լսել են պ. Սահակեանի խորհուրդը եւ սկսել են հաւաքել, ոմանք էլ, բզէզներին Աստուածանից ուղարկված պատիժ համարելով «իրանց մեղքերի համար», միջատներին հաւաքելը եւ այրելը յանդուգնդն մեղք են համարում, իբրեւ Աստուծու կարգադրութեանը հակառակ մի բան...

Խաւարում տառապող մեր խեղճ գիւղացի եղբայր, մեղքը ինքնապաշտպանութիւնը չէ, այլ տգիտութիւնն է մեղք, տգիտութիւնը. ահա այդ ակամայ մեծ մեղքից պէտք է ազատվել։ Մեր մէջ հաւատացեալ Սահակեանները գալիս են քեզ օգնելու, քեզ այդ մեղքից ազատելու եւ ոչ թէ մեղք գործել տալու։

Միջատները արագութեամբ եւ հեշտութեամբ ժողովելու համար՝ պ. Սահակեան այսօր մի տանեակ հասարակ գործիքներ պատուէր տուեց. վաղը պէտք է այդ գործիքներով Դիլիսկա գնայ, ուր պէտք է նրանցով փորձեր անվեն. եթէ փորձերը աջողվեն, միւս գիւղերի համար էլ պէտք է այդ գործիքներից պատրաստվեն։ Դա կօնաձեւ մի քսակ է, որի բերանի կողմը օղակաձեւ երկաթթել կայ եւ այդ օղակից փայտէ կոթ է կպցրած։

Ի դէպ—մի հետաքրքիր միջադէպ։ Մի քանի օր առաջ մի չանդուրեցի, մեծ քանակութեամբ բզէզներ հաւաքած, թաշկինակի մէջ կապած, բերաւ ցոյց տուեց գաւառապետի պ. օգնականին, յայտնելով, թէ կէս ժամում է հաւաքել իր մի արտում. ապա խնդրեց, որ թոյլ տայ միջատները հաւաքելու եւ ոչնչացնելու։ Գաւառապետի օգնականը պատասխանեց, թէ դրա համար թոյլտուութիւն պէտք է միթէ. եթէ տեսնում ես, որ դա օգտաւէտ եւ հնարաւոր բան է, հաւաքիր, ո՞վ է քեզ արգելում։ —Տէրութեան կարգադրութիւնը ջոկ բան է,— պատասխանեց գիւղացին, որ իր ծայրահեղ օրինապահութեամբ ընդհանրապէս օրինակելի եւ գովելի է, բայց երբեմն ծիծաղելի դառնալու աստիճանին է հասնում... Եթէ այս զիւղը մեր տունը գող մտնի, մենք, ուրեմն, պէտք է թոյլտուութիւն խնդրենք եւ ապա միայն պաշտպանենք մեր կեանքն ու գոյքը...

Սալիմեան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

—

Յուլիսի 8-ին

Ահա մօտ մի ամիս է, ինչ երկար փորձեր անելուց յետոյ, վերջապէս, քաղաքը պաշտօնապէս ընդունեց կապալառուից էլէքտրական լուսաւորութիւնը, որ եւ արդէն ամեն գիշեր քաղաքը լուսաւորում է։ Աւելորդ է ասել, որ եթէ փողոցների դուրս ընկած հին շինութիւնները չը լինեն, մարդ այդ արտաքին շքեղութիւնից (լուսաւորութիւնից) երբեմն կը մոռանայ, որ ինքը գտնվում է այնպիսի մի քաղաքում, որի յետ ընկած անկիւններում դեռ չատ բան կայ բարեփոխութեան կարօտ։ Այսուամենայնիւ էլէքտրական լոյսը մեծ բարիքներից մէկը պէտք է համարել ամեն մի քաղաքի համար։

Ի դէպ, մի քանի խօսք էլ մեր ցաւերի մասին։ Բաթումցիները երեւի կը յիշեն, որ մի քանի տարի առաջ, դեռ Տէր-Կոստոյի ժամանակ, մօտ 10 տարի չարունակ, թէ եկեղեցու եւ թէ ծիսակատարութիւնների մեծ մասը կատարում էր մի գաղթական ծերուկ քահանայ։ Անցան այդ ժամանակները, փոխվեցին պայմանները. Տէր-Կոստոն հեռացվեց ու նրան փոխարինեցին մեզ համար լաւ կարծեցեալ քահանաները. նրանց հաղարներով ռոճիկ նշանակվեց, Տէր-Կոստոն նոյնպէս քաղցած չը մնաց եւ գուցէ աւելի չաղ տեղ ճարեց, բայց ոչ ոք չը նկատեց, որ այդ միջոցներում հացից զրկվեց մի թշուառ ծերունի, մի խեղճ քահանայ, որը գուցէ այնքան մեծ հաւատով դէպի իր կոչումը երկար տարիներ սպա-

սաւորել էր հայ եկեղեցուն։ Նա թէեւ Տէր-Կոստոյի ձեռքին մի գործիք էր, եւ նրա նեղութեան արդիւնքի մեծ մասը շռայլում էր Տէր-Կոստոն, բայց եւ այնպէս գոնէ մի թիքա հաց էր ստանում եւ քաղցած չէր մնում։ Իսկ հիմա... հիմա քաղցած է նա։

—Ի՞նչ անեմ,—ասում էր նա երէկ ողորմելի ձայնով,—քանի անգամ դիմեցի Վեհափառ Կաթողիկոսին եւ աղաչեցի, որ ինձ մի անկիւն շնորհէ, մի յետ ընկած գիւղ, որ քաղցած չը մնամ, միայն մի թիքա հաց ճարեմ։ «Վաւ,—ըսաւ,—կը մտածեմ ու յետոյ արի պատասխան կը տամ»։ Շատ անգամ գնացի, բայց այլ եւս տեսնել չը կարողացայ ու ամեն անգամ վհատված յետ դարձայ։ Մուրացկանութիւն արի, ժողովուրդը սկսեց հազար ու մի տեսակ թուք ու մուր քսել երեսիս, որ ես անպատուում եմ մեր ժողովուրդը ու մեր եկեղեցին... էլ չեմ անի մուրացկանութիւն, բայց ասէք, ինչ անեմ այս ծեր հասակում, չէ՞ որ քաղցած եմ»։—Ահա այն տխուր խօսքերը, որոնք կցկտուր կերպով գուրս էին թռչում նրա բերանից եւ ծանր հառաչանքի հետ արտասուքի կաթիլները գլորվում էին նրա ալեզարդ մօրուքի վրայից։

Ո՞վ պէտք է հոգ տանի խեղճ ծերուկ քահանայի մասին, թող չտապի ու քաղցից ազատէ նրան։ «Մի թիքա հաց միայն»,—այս է նրա խնդիրքը։

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՒԱՌԻՑ

Ուղուր-Զայի-Բազար, յուլիսի 2-ին

Գօրիս գիւղաքաղաքից մօտ 7—8 ժամվայ ճանապարհ հեռու՝ գտնվում է Ուղուր-Զայի-Բազարը, որը գտնվում է համանուն գետի վրա։ Գեղեցիկ պտղատու ծառերը եւ բարձրահասակ նոճիները շրջապատում են այդ Վաճառանոցը։ Այդտեղ հաւաքված են շրջակայ գիւղերից կիսակիրթ մարդիկ, որոնք զանազան տեսակ առուտրով են զբաղվում։ Նոյն Վաճառանոցի հիւսիսային կողմումն է գտնվում Ա. Մելիք-Ազարեանցի, Մուսաբէգ Մելիք-Ղարագեօզեանի, Խօջամիրեանի, Կունդուրովի եւ ուրիշների պղնձահանքերը։ Շրջակայ գիւղացիները եւ հանքատէրերը իրանց կենսական պիտոյքները եւ ուտելիքները Ուղուր-Զայի-Բազարից են առնում. կայ ոստիկանատուն իր ոստիկանապետով։

Մինչեւ մարտ ամիսը տասնեակ գիւղեր մնացել էին առանց բժշկի. ցաւերի ճիրաններում տանջված գիւղացին վերահաս վտանգի ժամանակ մնում էր տարակուսութեան մէջ. չէր իմանում ինչպէս կարողանայ օգնութիւն հասցնել իր վրա ծանրացած հիւանդին, տանում էր Գօրիս գիւղաքաղաքը՝ այնտեղ ահագին ծախսերի տակ էր ընկնում. հիւանդին առանց օգնութեան պահելն էլ անկարելի էր։ Մնում էր երկու կրակի մէջ։ Այժմ փառք Աստուծոյ այդ դժուարութիւնները մասամբ վերացան, որովհետեւ բոլոր հանքատէրերը կառավարութեան թոյլտուութեամբ բերել են տուել մի ռուս բժիշկ։ Վերջինս պէտք է ձրի բժշկէ միայն հանքերում ծառայողներին, իսկ գիւղացիներից այցեգին պիտի առնի։ Բժշկի ոռճիկի հոգացողութիւնը ընկած է հանքատէրերի վրա։ Բժիշկը իր հետ բերել է բաւական դեղեր, բայց դրանով շատ մեծ օգնութիւն չէ կարելի հասցնել գիւղացիներին եւ հանքերում ծառայողներին։ Ցանկալի կը լինէր, որ հանքատէրերը միջնորդէին կառավարութեան առաջ եւ թոյլտուութիւն ստանային մի լաւ դեղատուն բաց անել տալ։ Բացի դրանից յարգելի բժշկի շրջապատողները, ֆելդշէրը եւ ուրիշները պէտք է աշխատեն հասկացնել նորեկ հիւրին, որ այն գիւղացիները, որոնք գտնվում են ամենադառն աղքատութեան մէջ՝ ձրի բժշկվեն։

Այստեղ պատ չէ երթեւեկում։ Գօրիսից մինչեւ այստեղ եւ շրջակայ հանքերն ու նշանաւոր վայրերը առաջիկայ 1902 թուականից կը սկսվի պօստային հաղորդակցութիւն։ Ճանապարհները արդէն կառուցվում են։

Ուղուր-Զայի-Բազարից դէպի արեւելք, մէկ ժամվայ ճանապարհ հեռու, գտնվում է Բայդաղ Թրքական գիւղը, որի մօտ է Մուսաբէգ Մելիք-Ղարագեօզեանի պղինձ հալելու գործարանը, որը այժմ դադարած է։ Մի քիչ հեռու գտնվում է պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեանցի գործարանը, նոյնպէս պղինձ հալելու, որ միակ կատարելագործված, գեղեցիկ եւ, որ գլխաւորն է, շատ գործող միակ գործարանն է շրջակայքում։ Բոլոր հանքատէրերը իրանց պղնձահանքերից գուրս եկած «ջոհարը» ուղարկում են Մելիք Ազարեանցի գործարանը, ուր շնորհիւ կատարելագործված մեքենաների՝ կարճ ժամանակում ստացվում է մաքուր դեղին եւ սեւ պղինձ, որը եւ արտահանում են զանազան քաղաքներ։ Գործարանը բանում է գիշեր ցերեկ։ Ամառը որովհետեւ շատ մոծակ է լինում եւ շատ սարսափելի չոգեր են տեղի ունենում, գործարանը փակվում է երկու ամիս ժամանակով—այն է յուլիս եւ օգոստոս ամիսները։ Տարվայ մնացած մասը անդադար գործում է։ Այս գործարանը, որ «Սիւնիք» անունն է կրում, շնորհիւ կառավարիչ պ. Արշակ Մամուլեանի, բարեկարգ, մաքուր եւ օրինակելի դրութեան մէջ է գտնվում։ Գործարանը ունի իր սեպհական ֆելդշէրը։

Գործարանի այդ օրինակելի դրութեան մէջ մի բան գլխաւորապէս աչքի է ընկնում, այդ այն է, որ ծառայողների մէջ ընթերցանութեան սէրը հանգած է. զբաղմունքի շատութիւնը չէ կարող լինել պատճառ, որովհետեւ այստեղի ծառայողները շատ բարեկեցիկ դրութեան մէջ են եւ օրվայ մեծ մասը աղատ են լինում գործից։ Բայց գլխաւորը սա է, որ նրանք իրանց թանգագին ժամերը բոլորովին անփոյթ կերպով են անցկացնում։ Փոխանակ պարապ ժամերին միասին հաւաքվելու եւ օգտաւէտ ընթերցանութեամբ պարապելու, դատարկախօսութեամբ են պարապվում։ Նրանց համար կարծես գոյութիւն չունեն լրագրութեան մէջ արծարծվող հրատապ խնդիրները։ Միակ խօսակցութիւնը փողն է եւ ուրիշ ոչինչ։

Ընթերցանութեան գործին պէտք է գլխաւորապէս զարկ տայ ինքը գործարանի կառավարիչը։ Ուստի եւ ցանկալի կը լինէր, որ «Սիւնիքի» յարգելի կառավարիչը աշխատէր ամեն կերպ դիւրութիւններ տալ ծառայողներին ընթերցանութեան գործում եւ ընթերցանութեան կայծը, սէրը վառ պահել նրանց սրտերում, մանաւանդ այսպիսի տեղերում, ուր մարդ ամեն մի հոգեկան բարոյական զուարճութիւնից զրկված է։

Լ. Յովսէփեան

ՆԱՄԱԿ ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ

Յունիսի 27-ին

Առհասարակ Ղրիմի հայերի մասին շատ քիչ է գրվում մեր պարբերական թերթերում. դրա պատճառը գլխաւորապէս այն է, որ նրանց կեանքով հետաքրքրվող չը կայ։ Մինչդեռ՝ ով քիչ թէ շատ մօտից ծանօթանում է Ղրիմի հայերի հասարակական խնդիրներին, նա տեսնում է, որ այստեղ եւս կան շատ երեւոյթներ, որոնց պէտք է հրապարակ հանել, լրագրութեան նիւթ դարձնել։ Մենք կաշխատենք ժամանակի ընթացքում աւելի մօտ ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին տեղիս հայերի հասարակական կեանքի հետ, որի մէջ, դժբաղդաբար, շատ քիչ մխիթարական երեւոյթներ կան։

Կարելի է ընդհանրապէս խօսել ամբողջ Ղրիմի հայերի մասին, առանց մատնացոյց անելու այս կամ այն քաղաքի վրա, որովհետեւ ամեն տեղ մենք նկատում ենք մի եւ նոյն աննշանելի անտարբերութիւնը դէպի հասարակական գործերն ու հիմնարկութիւնները։ Հասարակութեան համարեա իւրաքանչիւր անդամ, հեռացած ընդհանուրին վերաբերեալ գործերից, անձնատուր է եղել անձնական շահերին, չէզոք կեանք է վարում։ Նրա համար գոյութիւն չունեն հասարակական գործեր, նա չէ զգում որ եւ է բարոյական պարտականութիւն դէպի այն հասարակութիւնը, որի անդամն է ինքը համարվում։ Բայց մենք տեսնում ենք հարուստ հաստատոր աղաներ, որոնք գիշեր-ցերեկ տքնում են իրանց հարստութեան վրա հազարներ դիզելու, որոնք իրանց անձնական հաճոյքի, քէֆերի, պարահանդէսների համար հազարներ չեն խնայում եւ որոնք կլուբներում գիշերներ են լուսացնում կանաչ սեղանների շուրջը, հարիւրներ կորցնելով, բայց բարեգործական նպատակով նպաստ տալիս՝ կօպէկի վրա դողում են։

Երիտասարդ սերունդը, որը քաղաքներում պատկառելի թիւ է կազմում եւ որին է պատկանում ամեն տեղ գործունէութիւնը հասարակական ասպարէզում, կենդանութեան նշոյլ անգամ չէ ցոյց տալիս։ Հազիւ են նկատվում այս կամ այն քաղաքում մէկ-երկու անձինք, որոնք վարում են հասարակական գործերը, իսկ մեծամասնութիւնը հասարակութեան համար մեռած տարր է ներկայացնում։ Անտարբերութիւն, նոյն իսկ արհամարհանք դէպի մայրենի լեզուն, գրականութիւնը, դէպի ամեն մի հասարակական հիմնարկութիւն՝ դպրոց լինի դա թէ եկեղեցի, դէպի ամեն մի հասարակական խնդիր՝ հոգաբարձական լինի թէ երեցփոխական։ Զենք նկատում ոչ մի տեղ գոնէ մի փոքրիկ շրջան բանիմաց երիտասարդների կամ օրիորդների, որոնք զարթեցնէին հասարակութեան մէջ ինքնաճանաչութիւն, որոնք իրանց վրա վերցնէին մայրենի լեզուի, գրականութեան հետաքրքրութիւն զարթեցնելու գործը տեղիս հայերի մէջ եւ որոնք, հասարակական հիմնարկութիւնների գլուխ անցնելով, վարէին հասարակական գործերը։ Բայց մենք տեսնում ենք երիտասարդներ, որոնք անձնատուր են եղել արբեցողութեան կամ թղթախաղի եւ կամ որոնց իդէալն է ամեն միջոց ու ջանք գործ դնել լաւ կալվերութիւն անելու. մենք տեսնում ենք օրիորդներ, որոնք գիմնազիա աւարտելով, կամ այնտեղ մի քանի տարի սովորելով, զուգված-զարդարված թրեւ են գալիս բուլվարներում, հարուստ փեսայ որսալու համար. իսկ գրականութիւն, մասուլ, մանաւանդ մայրենի, հասարակական գործեր ու հիմնարկութիւններ, նրանց համար գոյութիւն չունեն։

Այնուհետեւ զարմանալի է մի թէ, որ ամեն տեղ հասարակական գործերը երեսի վրա են ընկած, հասարակական հիմնարկութիւնները կորցրել են իրանց նշանակութիւնը եւ օրըստօրէ դէպի անկումն են դիմում։

Ղրիմի ոչ մի քաղաքում չը կայ հայոց գրադարան-ընթերցարան, ոչ մի տեղ հայոց դրպրոցներ չեն վայելում հասարակութեան համակրութիւնն ու աջակցութիւնը։ Շատերից մի օրինակ, Սիմֆերօպոլի նման մի քաղաքում, որը Ղրիմի ամենահայաշատ քաղաքն է համարվում, եւ որ ունի, բացի մի քանի հարիւր գաղթականներից, մօտ 250 տուն հայ բնակիչ, որի մի զգալի մասը հարուստներ են կազմում, կրկնում եմ, այդ քաղաքի հայոց միակ, այն էլ շատ հարուստ, երկդասեան դպրոցը, շնորհիւ ժողովրդի աննկարելի անտարբերութեան, այս տարի դարձաւ միդասեան այն պատճառով, որ դպրոցի աւելի քան հարիւր սաներից վերջին դասարաններում հազիւ 1—2 հոգի է մնում, որովհետեւ ծնողները մի կամ երկու տարի իրանց երեխաներին յիշեալ դպրոցը ուղարկելով, այնուհետեւ մոցնում են նրանց որ եւ է խանութ, իբրեւ «мальчикъ», որ ապագայում «приказчикъ» դառնայ (տեղիս հայ թէ հարուստ եւ թէ աղքատ ծնողների իդէալը) եւ կամ մոցնում են այլ դպրոցներ։ Այդ հանգամանքը ստիպել է դպրոցի հոգաբարձութեան փակել վերջին դասարանը։

Ահա ինչպիսի տխուր պատկեր է ներկայացնում Ղրիմի հայերի կեանքը ընդհանրապէս։

Յ. Աբրահամեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 13-ին

1899 թուին Ախալքալաք գաւառին երկրաշարժից հասած աղէտը՝ ի միջի այլ օգնողների՝ ստիպեցին եւ յարգելի գ. Դ. Գուլասեանցին կազմելու երգերի ժողովածու, «Զանդուխտ պատանի» խորագրով, գինը 70 կ. եւ հրատարակելու նոյն թուին ու եկամտի մի մասը, ինչպէս գրքի ճակատին գրված է, յատկացնելու վնասվածների օգտին։ Ահաւասիկ երկրորդ-երրորդ տարին է, որ յիշեալ գիրքը լոյս է տեսել եւ տարածվել, բայց ոչ մի տեղ հաշիւները դեռ չեն հրատարակված (գոնէ մենք չենք պատահել)։

Առաջնորդվելով այն սկզբունքով, որ «ով չուտ օգնի—կրկնակի կօգնի»՝ կարծում ենք, որ եթէ քիչ թէ շատ հասոյթ եղել է, շուտով պէտք է տեղ հասցնել, ապա թէ ոչ «Զատկից յետոյ կարմիր հաւկիթ եղած չեղած մէկ հաշիւ է», իսկ հաշիւների մասին որքան չուտ-չուտ տեղեկութիւն հրատարակվի, այնքան աւելի կը նպաստէ նպատակին եւ օգտաւէտ կը լինի ապագայ նոյնանման դէպքերի համար։

Օրինակ վերցնենք պ. Գ. Զալիուշեանից։

Անյուշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բաթումից, մեր թղթակցից ստացանք հետեւեալ հեռագիրը. «Յուլիսի 12-ին, առաւօտեան ժամի 11-ին, Բուռուն-Թաբիէ բատարէյում տեղի ունեցաւ պայթիւն վառօդի նկուղում. շատ մարդ սպանվեց ու վիրաւորվեց»։ «Кавказъ» լրագիրն եւս ստացել է հետեւեալ հեռագիրը. «Այսօր, կէսօրին, տեղի ունեցաւ սարսափելի պայթումն Բուրուն-Թաբիէի բատարէյի ականների պահեստում, որ գետեղված է քաղաքի կենտրոնական մասում։ Սպանված են փոխ-գնդապետ Կրէնկէ, պօրուչիկ Եսիպով, բատարէյում գտնվող կապէլմէյստեր Հաուպտման եւ մօտ 30 զինուոր։ Վիրաւորվածները շատ շատ են. կան սպանվածներ եւ վիրաւորվածներ անցորդների միջից։ Մի քանի տներ վնասված են գնդակների կտորներով եւ քարերով, իսկ բատարէյային մօտիկ գտնված տները ճեղքվածքներ ստացան եւ զրկվեցին ապակիներից։ Պայթումի տեղում փորվածքներ են անում եւ դիակներ հանում։ Պայթումի պատճառները դեռ եւս յայտնի չեն»։

—

Ինչպէս հաղորդում են Մոսկվայի լրագիրներին, Կուրսկ քաղաքից յուլիսի 6-ին 60 մարդու ստորագրութեամբ ուղարկված է կոմս Լ. Ն. Տոլստոյին հետեւեալ հեռագիրը. «Սաստիկ վշտացած ձեր հիւանդութեան մասին ստացված տեղեկութիւնով, շտապում ենք յայտնել ձեզ, թանգագին Լեւ Նիկոլայեվիչ, մեր ջերմ ցանկութիւնները, որ դուք շուտով առողջանաք մարդկութեան բարօրութեան համար»։

—

«Кавказъ» լրագրին հեռագրում են Պեատիգորսկից. «Յուլիսի 15-ին, տեղական մայր եկեղեցում կատարվելիք հոգեհանգստից յետոյ, Պերխալսկայա ժայռի մօտ, Լերմօնտովի մեծամարտի տեղում, կը կայանայ բանաստեղծի ժամանակաւոր արձանի բացումը, որի ժամանակ կարտասանվեն ճառեր Լերմօնտովի կեանքի եւ նշանակութեան մասին, կը կարդացվեն հատուածներ նրա գրուածքներից եւ նրան նուիրված գրութիւններ։ Հանդէսին կը մասնակցեն հասարակական հիմնարկութիւնները եւ զանազան ընկերութիւններ։ Ուսանողները պսակ կը դնեն արձանի վրա, որի համար նրանք իրանց մէջ ստորագրութիւն են բացել։ Հանդէսին կը մասնակցէ նաեւ տեղական բատալիօնը, որի մէջ կան Տենգինեան գնդի օֆիցէրներ, որի մէջ ծառայում էր Լերմօնտով»։

—

Զինուորագրական նոր կանոնադրութիւնը, որ մտցնվում է այժմ ֆինլեանդական մեծ-իշխանութեան մէջ, մի շատ նշանաւոր կէտում զանազանվում է ընդհանուր պետականից։ Այդ կանոնադրութեամբ զինուորների ծառայութեան ժամանակը զօրքի մէջ կրճատված է եւ հասցրած երեք տարու։ «Новое Время» լրագիրը այս առիթով նկատում է, թէ այս կրճատումը մի ցուցումն է, որ նոյնպիսի նորամուծութիւն հարկաւոր է եւ ամբողջ պետութեան համար։ Լրագիրն ասում է, թէ ինչպէս այս, այնպէս էլ ուրիշ նշաններից երեւում է, որ զինուորագրական ծառայութեան երեքամեայ ժամանակամիջոցը մտադրութիւն կայ մտցնել եւ պետութեան միւս մասերում։

—

Մոսկվայում մօտ ժամանակներում վախճանված յայտնի միլիոնատէր Սօլդաթենկովի եղբայրը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, դատ է բաց արել քանդելու իր եղբօր կտակը, որով, ինչպէս յայտնի է, մեծ գումարներ են թողնված զանազան բարեգործական նպատակների համար։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կողմից տեղի ունեցաւ բացատրութիւն, թէ իգական գիմնազիաների վեցերորդ եւ մինչեւ անգամ չորրորդ դասարաններն աւարտած կանայք իրաւունք ունեն լինել դեղագործի աշակերտուհի։ Այդ պաշտօնն ստանալ ցանկացողները նախօրօք պէտք է քննութիւն տան լատիներէն լեզուից արական գիմնազիաների չորրորդ դասարանի դասընթացքի չափով։

—

Գ.պ. Եաբլօնովսկի եւ Գավրիլէնկօ միջնորդութիւն էին յարուցել ներքին գործերի մինիստրի առաջ, որով խնդրում էին թոյլ տալ հրատարակելու մալօրոսսական լեզուով մի լրագիր «Степь» անունով։ Այժմ մայրաքաղաքի թերթերը հաղորդում են, որ ներքին գործերի մինիստրը անհնար է գտել յարգել այդ միջնորդութիւնը։

—

Պետերբուրգից ոչ հեռու մասնաւոր միջոցներով հիմնվում է մի սանատորիա յատկապէս արբեցողների համար։

—

Պետերբուրգի նահանգական դատարանը մօտ օրերումս հաստատեց մի անսովոր կտակ, որով մայրաքաղաքի հաշտարար դատաւոր Պետրով կտակել է իր աւագ-դռնապանին մօտ 300 հազար ռուբլի։ Պետրով իր տունը կտակել է մի հեռաւոր ազգականի, որ տունը ծախելիս պէտք է վճարէ նոյն աւագ դռնապանին էլի 25,000 ռուբլի։

—

Մեզ հաղորդում են, որ պարսկաստանցի բժիշկ Մկրտիչ Եղիազարեան Բանդոլֆ, որ ուսել է իր մասնագիտութիւնը Ամերիկայում եւ եօթ տարի բժշկութեամբ է պարապել Նիւ-Եորկում, այժմ վերադառնում է իր ծնընդավայրը՝ Թէհրան բժշկութեամբ զբաղվելու համար։

—

ՇՈՒԼԱՒԷՐԻՑ մեզ գրում են. «Շնորհիւ գաւառապետ պ. Կոտօվիչի նպատակայարմար կարգադրութիւնների եւ ոստիկանական օֆիցէր (офицеръ полицейской стражи) պ. Բագրատ Արէշեանի քաջութեան, աջողվեց վերջինս իր խմբի հետ, Լօք-Ջանդարի անտառում, Զաթախի գարեջրի գործարանի մօտ, ապանել աւազակապետ Զոլախ Բալիին, որը ահա երկու տարի է, ինչ անհանգստութիւն էր պատճառում խաղաղ ազգաբնակութեանը եւ Թիֆլիսի, Գօրու, Ղազախի եւ Բօրչալուի գաւառական վարչութիւններին։ Զոլախ Բալին յայտնի Հալայ-բէկ Մուբսակուլօվի խմբի անդամներից էր եւ վերջինիս սպանվելուց յետոյ առանձին աւազակխումբ ունէր։ Սպանողները եղել են աղբուլախեցի Անտոն Կարապետեանը եւ շուլաւերցի Գեւօ Բախչեանը։ Աւազակապետը ստացել է գնդակի եօթ հարուած. գանգը ամբողջապէս փշրված է։ Պ. գաւառապետին աջողվել է նաեւ բռնել խմբի մնացած բոլոր անդամներին, բացի Համիդից, որին բռնելու համար ամեն միջոց գործ է դրված։ Այսպիսով կարելի է ուրախութեամբ արձանագրել, որ Զոլախ Բալիի ամբողջ խումբը ոչնչացրած է։ Գաւառապետ պ. Կոտօվիչ հեռագրով շնորհակալութիւն ստացաւ պ. Նահանգապետից, իսկ օֆիցէր պ. Արէշեանը, չափարներ Կարապետեան եւ Բախչեան ներկայացրված են վարձատրութեան։»

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Նորերս գիւղատնտես Ս. Բաշինջաղեան դարձեալ շրջեց մեր գաւառի մի քանի խաղողի այգիները եւ գտաւ, որ խաղողի հիւանդութիւն կայ մեծ չափով Խաչմազի այգիներում, այն է oïdium եւ cladosporium, որոնց դէմ միջոցների է դիմում հէնց հիմա պ. գիւղատնտեսը, ուղարկելով սրսկելու համար հիւանդոտ խաղողի ճիթերը ու տերեւները։ Գիւղատնտեսութեան մի ուրիշ մահաբեր թշնամի երեւացել է պ. Ծատուրեանցի կալուածքում բամբակի եւ «ջուտի» ցանքսերի վրա. այնտեղ այդ բոլոր ցանքսերը լափել է Rotys Sticticalis (метелица) թրթուրի մի տեսակը, որը առաջին անգամն է Ղուբայի գաւառում երեւում։ Հնար չը կար միջոցների դիմելու համար այդ թրթուրի դէմ, որովհետեւ մեծ քանակութեամբ երեւացել էր յանկարծ եւ սաստիկ արագ ոչնչացրել ցանքսերը։»

—

ԱՇՏԱՐԱԿԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 7-ին, երեկոյեան ժամը վեցից անց, բաւականաչափ երկինքը պատեցին սեւ ամպեր եւ եկաւ ընկոյզի մեծութեամբ կարկուտ, որը տեւեց տասներկու րոպէ։ Կշռեցինք, ութի կշիռը մի ֆունտ էր։ Շաղթից ազատված այգիների պտուղները զոհ գնացին կարկուտին։ Վնասը ահագին է։ Կարկուտ է եկել նոյնպէս շրջակայ գիւղերում։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Թէեւ անասունների ժանտախտը թեթեւացել եւ շատ գիւղերում իսպառ վերջացել է, սակայն մինչեւ այժմ դեռ կորված է մեր գաւառի յարաբերութիւնը քաղաքի հետ։ Մեր չինականները սոսկալի նեղութիւն են քաշում ժանաւանդ այժմ, երբ խոտն արդէն հնձվել է, գարին հնձվում է, իսկ ցորենը մօտ է հնձվելու։ Սակայն անասուն չը կայ, որ խոտը, օրանը դաշտից գիւղ բերեն, չը կայ, որովհետեւ անասունների մի մասը կոտորվեց ցաւից, մեծ մասը այրեցին նաւթով, իսկ մի մասը հեռացած է դէպի ամարանոցները, «եայլա»։ Մեր գաւառի չինականները յուլիսի 5-ին խմբովին ներկայացան Երեւանի պ. Նահանգապետին եւ խնդրեցին, որ թոյլ տայ իրանց անասունները բերել եւ գործ դնել երկրագործական աշխատանքի, քանի որ քաղված խոտը, գարին եւ հացը կարող են թրջվել, փչանալ դաշտերում, իսկ կալել եւ կալսելը կուշանայ, եւ բացի այդ անկարելի կը լինի հերկել դաշտերը եկող տարվայ համար. մի խօսքով, մեր չինականների տնտեսութիւնը այս տարի իսպառ կը քայքայվի։ Պ. Նահանգապետը խոստացաւ շուտով կարգադրութիւն անել այդ մասին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ուրմի, յունիսի 17-ին

Այստեղի աւօրիների մէջ մահմեդականութիւն ընդունելու շարժում է սկսվել։ Ինչպէս յայտնի է, Պարսկաստանում բնակվող աւօրիները իրանց դաւանափոխութեամբ հռչակված են։ Նրանց կրօնական դաւանանքը երբեմն կոչիկից էլ շուտ է հնանում—անպէտքանում։ Պարզ խօսած՝ սրանք ոչ կրօն եւ ոչ էլ դաւանանք ունեն եւ ոչինչ նուիրական, սիրելի եւ պաշտելի բան աշխարհումս, բայց միայն փողի տենչանք։ Փող ձեռք բերելու համար աւօրին չէ խնայում ընտանեկան պատիւ, սրբութիւն, ազգային եւ անհատական արժանապատուութիւն։ Կը հարցնէք, թէ ինչու այսպէս անբարոյականացել է այս ժողովուրդը։ Ահա թէ ինչու։ Մի րօպէ նոյն իսկ երեւակայելու դժբաղդութիւն ունեցէք, որ դուք չրջապատված էք 4—5 դաւանութեան պատկանող բազմաթիւ միսիօնարներով, որոնցից ամեն մէկը ձեզ համոզում-յորդորում է լոյս հաւատի գալ, թողնել դժոխք տանող ճանապարհը, եւ այդ դարձի գալու համար ձեզ առաջարկում է փող, հարկաւոր դէպքում որքան կամենաք։ Երեւակայեցէք այնուհետեւ, որ դուք ապրում էք այնպիսի միջավայրում, ուր ամեն ինչ չափվում է փողով, եւ դուք մի եւ նոյն ժամանակ տգէտ էլ էք, խնդրեմ ասէք՝ ինչ կը լինի ձեր դրութիւնը։ Զարմանալին այն է, որ աւօրիները ունեն եւ ինտիլիգէնցիա, համալսարանի չէմք մաչող բազմաթիւ հաքիմբաշիներ, որոնք նոյնպէս չեն տարբերվում իրանց տգէտ ազգակիցներից։ Ինչ վերաբերում է Ուրմիայի աւօրուհիներին, նրանք իրանց առօրեայ կեանքով, վարք ու բարքով յիշեցնում են առասպելական վավաշտ Շամիրամին։ Այդպիսով աւօրիների դրութիւնը անմխիթարական է, ցաւալի եւ կօրստաբեր։

Վերջին մի քանի շաբաթվայ ընթացքում 9 աւօրուհիներ մահմեդականութիւն ընդունեցին. դրանք, մի բացառութեամբ, բոլորն էլ ընտանիքի մայրեր էին եւ իրանց իսկ ցանկութեամբ դիմեցին կրօնափոխութեան։ Բացառութիւն կազմողը մի 14-ամեայ օրիորդ էր. սրա հետ պատահած դէպքը ուշագրաւ եւ սրբատայոյզ էր. երկու շաբաթ է, որ այդ դէպքը Ուրմիի խօսակցութեան նիւթն է կազմում։

Ամսիս 1-ին, 8 հոգի թուրք սրիկաներ Բարանդուզի Զիւիկ գիւղից առեւանգում են 14 տարեկան մի աղջիկ, բերում են Ուրմի եւ ամբողջ 3 օր պահում են։ Երեք օրից յետոյ, աղջկայ ծնողների բողոքի վրա, կառավարութիւնը խիստ միջոցների է դիմում եւ կարողանում է աղջկան դուրս բերել եւ նորից քննութեան ենթարկել։ Քրիստոնեայ աղջկան առաջարկում են մուսուլմանութիւն ընդունել. աղջիկը մերժում է. կառավարութիւնը կամենում է ազատել աղջկան, բայց ամբոխը ընդդիմանում է, եւ աղջկան բռնի քաշտալով տանում է մուշտէյիդի մօտ, որպէս զի նա համոզէ կրօնափոխ լինելու։ Միսիօնէրները նամակներ են գրում մուշտէյիդին եւ պահանջում աղջկան. վերջինս խոստանում է մի քանի օրից յետոյ յանձնել։ Ի՞նչ խայտառակ խաղ։ Անցնում է ամբողջ 9—10 օր. աղջիկը ամեն օր լալիս էր, խնդրում, պաղատում էր, որ իրան ազատեն բարբարոս սէյիդ-մոլլաների ձեռքից։ Յունիսի 9-ին, ռուս, ամերիկացի, անգլիացի, գերմանացի եւ ֆրանսիացի միսիօնէրները, միացեալ ոյժով պահանջում են աղջկան. մուշտէյիդը 50 թուման փրկանք է ուզում. ֆրանսիացի միսիօնէրները համաձայնվում են տալ, որովհետեւ աղջիկը կաթոլիկ էր։ Ռուսները, տեղական սովորութիւններին ծանօթ չը լինելով, հակառակում են կաշառք տալուն, եւ ասում են, որ միւս օրը կը գնան եւ ոյժով կը բերեն աղջկան։ Միւս օրը, յունիսի 10-ին, կաթոլիկ աւօրիների եպիսկոպոսը եւ մի ֆրանսիացի վարդապետ գնում են մուշտէյիդի տունը եւ դարձեալ պահանջում աղջկան. աղջիկը դուրս է գալիս եւ յայտնում է, որ ինքը մուսուլման է դարձել։ Օրիորդի յուսահատ յայտարարութիւնը սոսկալի տպաւորութիւն թողեց թէ քրիստոնեայ եւ թէ մահմեդական ազգաբնակութեան վրա. առաջինները յաղթված եւ տխուր, երկրորդները յաղթական եւ ուրախ։

Թուրքերը, իրանց յաղթանակով երես առած, այսուհետեւ ազատ, հաւարձակ պիտի առեւանգեն բազմաթիւ աւօրուհիներ, ո՞վ է արգելողը։

Մահմեդականացած 9 աւօրուհիներն էլ կաթոլիկ դաւանութեան էին պատկանում։

Տ. Օտեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Կարսից մեզ գրում են. «Էրզրումից եկած թուրք ճանապարհորդները հաղորդում են, որ անցեալ երեքշաբթի օրը, կառավարչական սարայում, թուրք ամբոխի կողմից հրաձգնով սպանվել է Էրզրումի կուսակալ Ռէուֆ փաշան, որ յայտնի էր իբրեւ լուսամիտ եւ արդարասէր մարդ եւ հարստահարիչների ու աւազակների հալածող կառավարիչ։ Ասում են, որ ոճրագործներին դրդել են ալայբէյի (ժանդարմների չէֆ) Ահմէդ բէկը, յայտնի հարստահարիչ Սիւրմէլի Մահմէդ փաշայի որդին եւ ընկեր Էրզրումցի բալատիայի ոէխ (քաղաքապետական ժողովի նախագահ) Շերիֆ էֆէնդին։ Ահմէդ բէկը, շնորհիւ նախորդ պատրիարքների ջանքերին, կայսերական մի քանի իրաձգներով զրկված էր իր ընտանիքով միասին հայաբնակ տեղերում ապրելու իրաւունքից, բայց վերջին տաճկական քաղաքականութիւնների շնորհիւ ոչ միայն նա տեղափոխված չէր հայկական նահանգներից, այլ եւ կանչված էր Էրզրումի նման մի կարեւոր տեղում վերոյիշեալ պատասխանատու պաշտօնը վարելու, ուր բնականօրէն պէտք է իր դաւանային հակումներին յագուրդ տար. իսկ Շերիֆ էֆէնտին, իր անդուսպ կաշառակերութեան պատճառով, ներկայ հանգուցեալ կուսակալի ձեռքով հեռացրված էր իր նախկին պաշտօնից, պատժական դատարանի անդամակցութիւնից, եւ երկար միջնորդութիւնների ու խոստումների շնորհիւ նշանակվել էր իր այժմեան պաշտօնին։ Բայց, ինչպէս պատմում են, արդարասէր Ռէուֆ փաշան, մի քանի շաբաթ առաջ, այդ երկու գազան պաշտօնեաներին էլ բանտարկած է եղել իրանց կատարած զեղծումների համար, սակայն հիւպատոսների միջամտութեան շնորհիւ նորից արձակել է բանտարկութիւնից։ Ենթադրվում է, թէ սպանութեան ոճիրը կատարվել է այս երկուսի թելադրութեամբ, որպէս զի միանգամ ընդմիշտ ազատվել կարողանան իրանց չարագործութիւններին արգելք հանդիսացող անաչառ մարդուց։ Եթէ այս իրողութիւնը ստուգվի, դժբաղդ հայերի, մասնաւորապէս Էրզրումի նահանգի բնակիչների համար մի մեծ կորուստ պէտք է համարվի, որովհետեւ այժմեան պայմաններում Ռէուֆ փաշաները որչափ անհրաժեշտ են, նոյնչափ հազուագիւտ են Թիւրքիա անուանված դժոխքի պաշտօնեաների մէջ։ Հանգուցեալը, իբրեւ լուսամիտ եւ եւրոպականացած մարդ, ինչպէս հաւաստիացնում են տեղեակ անձինք, չը կարողանալով համակերպվել բարձր իշխանութեան աւերիչ ուղղութեանը, մի քանի անգամ հրաժարվել է իր պաշտօնից, ամեն անգամ մերժումն ստանալով, մինչեւ որ նոյն կառավարութեան ստոր գործակալների ձեռքով վերջ է դնվում նրա օգտաւէտ կեանքին։ Դժբաղդ երկիր, ուր ազնիւ մարդկանց համար պատրաստ է ամեն ստոր միջոց եւ ամեն անարդար հատուցումն։»

—«Germania» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, թէ այնտեղ յամառութեամբ լուրեր են պատում, որ իբր ռուսաց կառավարութիւնը մտադիր է հրաւիրել մի նոր միջազգային կոնֆերենցիա լուծելու այն վիճելի հարցերը, որոնք վերաբերում են մերձաւոր Արեւելքին։ Բալկանեան սլաւօնական պետութիւնները պատրաստ են, ըստ երեւոյթին, յանձնել Ռուսաստանին, որ նա ներկայացուցիչ լինի իրանց շահերի։ Բոլգարիան, լուրերին նայելով, մտադիր է կրճատել իր զօրքի թիւը եւ այս միջոցով հնարաւորութիւն տալ Ռուսաստանին առաջարկելու Թիւրքիային հրաժարվել զօրքերը Մակեդոնիա ժողովելուց։ Բոլգարօ-մակեդոնական յուզմունքները դադարեցնելու նպատակով Ռուսաստանը կառաջարկէ Թիւրքիային շուտով ըէֆօրմներ մտցնել Մակեդոնիայում։ Սերբիան եւ Զերնոգորիան կը հրաժարվեն այն միջոցներից, որ նրանք այժմ ձեռք են առնում ալբանացիների յարձակումների դէմ։ Սրա փոխարէն Ռուսաստանը կը պահանջէ Թիւրքիայից զրաւական, որ նա միջոցներ ձեռք կառնի ալբանական անկարգութիւնների դէմ։ Ապա ռուսաց կառավարութիւնը սկիզբն կը դնէ երեքպետեան դաշնակցութեան Բալկանեան սլաւօնական երեք պետութիւնների մէջ։ Բայց գլխաւոր ուշադրութիւնը Ռուսաստանը կամենում է դարձնել յունադաւան եկեղեցու վիճելի հարցերի լուծման վրա։ Կոնֆերենցիան ենթադրվում է հրաւիրել կամ Պետերբուրգում կամ Կոպէնհագէնում։

—«Berliner Tageblatt» լրագրի Պարիզի թղթակիցը հաղորդում է, թէ Վալդէկ-Ռուսսոյի մինիստրութեան մէջ շուտով տեղի են ունենալու փոփոխութիւններ։ Այն դժգոհութիւնը, որ յայտնում են սօցիալիստները Վալդէկ-Ռուսսոյի դէմ, չափաւոր հանրապետականների մէջ յոյս ծնեցրեց, թէ նա կը բաժանվի Միլերանից եւ կը մօտենայ կենտրօնին։ Միւս կողմից Վալդէկ-Ռուսսօ, անկասկած, կը կամենար, որ արդարադատութեան մինիստր Մօնիս հեռանար մինիստրական կազմից, որովհետեւ նա իրան անյարմար դրութեան մէջ դրեց իր մասնակցութեամբ կօնեակի առեւտուրի մէջ։ Այսուամենայնիւ Վալդէկ-Ռուսսօ հազիւ թէ վճռէ կտրել իր կապերը սօցիալիստների հետ։ Հաւանական է, որ նա կը դիմէ մի այնպիսի միջոցի, որը փոքր ինչ հանգստացնէ բուրժուա դրամատէրերին եւ մի եւ նոյն ժամանակ հնարաւորութիւն տայ պահելու սօցիալիստների աջակցութիւնը։ Այդ միջոցը, որի մասին խօսում են Պարիզի քաղաքական շրջաններում, հետեւեալն է.—Միլերան կը հրաժարվի առեւտրի եւ արդիւնագործութեան մինիստրի պաշտօնից եւ յանձն կառնի արդարադատութեան մինիստրի պօրտֆէյլը, իսկ Մօնիս հրաժարական կը տայ եւ դուրս կը գայ մինիստրական կազմից։ Արդարադատութեան մինիստրի պաշտօնում Միլերան աւելի անվնաս կը թուի վախկոտ մարդկանց։ Գուցէ նաեւ մի-երկու մինիստրներ թողնեն իրանց պաշտօնները, ինչպէս ծովային մինիստր Լաննէսան եւ հասարակական աշխատանքների մինիստր Բոդէն։ Կիրառդրծվի արդեօք այս ծրագիրը թէ ոչ—դեռ եւս անյայտէ, բայց անկասկած է այն, որ նա քննվում է Վալդէկ-Ռուսսոյի կողմից։ Հետեւանքը յայտնի կը լինի ոչ վաղ, քան տասն օրից յետոյ։

—Վալդէկ-Ռուսսոյի կառավարութեան շատ կողմնակիցներ դժգոհ են այն հանգամանքից, որ մինիստրութեան նախագահը չտապեց փակել պարլամենտի նստաշրջանը. դժգոհ են նաեւ նրա բռնած ընթացքից վերջին ժամանակ։ Դժգոհները մեղադրում են ֆրանսիական առաջին մինիստրին այն բանի մէջ, որ նա արձակուրդ տալով պարլամենտի անդամներին, կամենում էր խուսափել մի քանի փափուկ հարցերի մասին կարծիք յայտնելու անհրաժեշտութիւնից։ Այսպէս, անհաշտ սօցիալիստները մեղադրում են Վալդէկ-Ռուսսոյին, որ նա նստաշրջանի փակման դէկրէտը կարդաց առաջ, քան պատգամաւորների ժողովը հնարաւորութիւն ունէր ձեռնամուխ լինելու Պատարի հարցապնդման քննութեան այն խիստ միջոցների վերաբերմամբ, որ ձեռնարկել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մի քանի պրոֆէսօրների դէմ։ Աւելի կարեւոր նշանակութիւն ունի այն, որ մինիստրութեան աջակցող սօցիալիստներն եւս դժգոհութիւն են յայտնում նրանից։ Այդ կուսակցութեան պարլամէնտական պարագլուխ Վիվիանին, որ նոյն դերն է խաղում, ինչ որ մի ժամանակ կատարում էր Միլերան, «Lanterne» լրագրում արպել է մի յօդուած, որի մէջ յայտնում է, թէ մինիստրութեան գործունէութեան եղանակը փոխվել է, թէ Վալդէկ-Ռուսսօ նկատելի կերպով թեքվում է դէպի աջ եւ ժամենում է չափաւոր հանրապետականների այն պարագլուխներին, որոնք պատրաստ էին դաւաճանելու հանրապետութեանը, երբ նա վտանգի մէջ էր։ Վիվիանի ուշադրութիւն է դարձնում Վալդէկ-Ռուսսոյի խուսափողական ընթացքի վրա, երբ պատգամաւորների ժողովում երկրորդ անգամ քննվում էր ընկերակցութիւններին վերաբերեալ օրինագիծը, կառավարութեան մերժման վրա քննութիւն սկսելու Զինաստանում զինուորների կողմից կատարված անգութիւնների մասին, մինիստրութեան ակնյայտնի ցանկութեան վրա խուսափելու Պատարի հարցապնդման պատասխանելուց եւ այլն։ Ի հարկէ մինիստրութեան թշնամի լրագիրները չափազանց գոհ են, որ մինիստրական բանակում տարաձայնութիւններ են սկսվել։ Ինչպէս կարծում են, Վալդէկ-Ռուսսօ հարկաւոր կը համարէ պատասխանել Վիվիանիի մեղադրանքներին։

—Մի գերմանական լրագիր տպագրել է հետեւեալ հետաքրքրական վիճակագրութիւնը, որ վերաբերում է գերմանական Վիլհէլմ կայսրի արտասանած ճառերի թւին։ «Վիլհէլմ կայսրը,—ասում է այդ լրագիրը,—իր գահակալութեան օրից սկսած մինչեւ այժմ արտասանել է ոչ աւելի եւ ոչ պակաս քան 916 հրապարակական ճառ, որոնցից 22-ը ֆրանսերէն, օտարերկրեայ միապետներին այցելելու ժամանակ, 18-ը անգլիերէն, երեքը ռուսերէն եւ 873-ը գերմաներէն։»

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յուլիսի

ԼՕՆԴՕՆ. Հակատուբերկուլօզային համաժողով։ Բրուարդէլ ապացուցանում է տուբերկուլեօզի բուժելի լինելը. նա համաձայն չէ Կօխի կարծիքի հետ, որ տուբերկուլեօզը անասուններից չէ անցնում մարդուն։

ՍՕՖԻԱ. Միտրօպօլիտ Կլիմէնտ վախճանվեց։

Կ. ՊՕԼԻՍ. Ցունական կառավարութիւնը տեղեկութիւն տուեց Բ. Դրանը իր դիտաւորութեան մասին ուղարկելու դէպի Թիւրքական ջրերը իր նաւատորմիղը, որ կայցելէ Զմիւռնիա, Սալօնիկ եւ Աֆօն, բայց Բ. Դուռը, քաղաքական պատճառներից դրդված, պատասխանեց մերժումով։ Այս առիթով յունական դեսպանի եւ Թիւրքական արտաքին գործերի մինիստրի մէջ տեղի են ունենում բանակցութիւններ։

ՄՕՍԿՎԱ. Այսօր Մօսկվա-Կազանեան ճանապարհի Պրօկազնա կայարանում անյայտ չարագործներ փորձ փորձեցին խորտակելու մարդատար № 25 գնացքը. սրա համար ռէլսերի վրա նրանք դրել էին մի հեռագրական սիւն, բայց մեքենավարը ժամանակին կանգնեցրեց գնացքը։

ԲԱԹՈՒՄ. Էկսօրին մօտ տեղի ունեցաւ ականների պայթումն, որոնք գտնվում էին մի շինութեան մէջ Բուրուն-Թաբիէի մօտ, քա-

ղաքի մարդաշատ մասում։ Դժբաղդութիւնը ահագին է։ Շատ օֆիցէրներ չը կան. հաւաքում եւ հողի տակից հանում են դիակներ. մարդկային շատ զոհեր կան եւ փլված տներ։ Հրապարակի վրա գտնում են մարդկային մսի կտորներ, կտրված ձեռներ եւ ոտներ։ Չէ կարելի մինչեւ անգամ մօտաւորապէս որոշել վնասվածների թիւը. քաղաքի կենտրոնական մասը կրում է կործանման հետքեր։

ԽԱՐԿՈՎ։ Հողային առեւտրական բանկի վարչութեան անդամներին, Լիբարսկուն, Օրլովին, Ժուրավլեվին, Գոլեվին, Աբրամովին, Ավիլովին, Վ. Ալչեվսկուն եւ Կուկսինին հարցափորձի ենթարկելուց յետոյ Նահանգական դատարանի պրոկուրորի սենեակում, որոշումն կայացաւ ձերբակալելու վերոյիշեալ բոլոր անձերին, եւ նրանք բոլորը, ոստիկանական պաշտօնեաների ուղեկցութեամբ, ուղարկվեցին նահանգական բանտը։ Այս կարգադրութիւնը կը փոխվի, եթէ հողային բանկի վարչութեան անդամների համար վեց միլիոն րուբլու երաշխաւորութիւն ներկայացնողներ գտնվեն, իսկ առեւտրական բանկի վարչութեան անդամների համար—3,200,000 րուբլու երաշխաւորութիւն ներկայացնողներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գերմանական «Շարլոտտա» նաւը ճանապարհ ընկաւ այստեղից յուլիսի 12-ին։ Պրինց Ադալբերտ մեկնեց Պետերհոֆ, որտեղից, Նորին Մեծութեան հրաժեշտ տալուց յետոյ, կուղեւորվի Կրոնշտադտ, ուր եւ կը նստի «Շարլոտտա» նաւը։

13 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մեծ-Իշխան Պաւլ Ալէքսանդրովիչ յուլիսի 12-ին ճանապարհ ընկաւ արտասահման։

Յուլիսի 12-ին Պետերբուրգ ժամանեց յունական արքայորդի Անդրէյ։

ՊԱՐԻԶ։ Զինուորական մինիստրը հեռագրով թոյլատրութիւն տուեց գեներալ Վուարոնին վերադառնալ այն չոգենաւով, որ կը մեկնի Զինաստանից օգոստոսի 2-ին, եւ զօրքերի գերագոյն հրամանատարութիւնը յանձնել գեներալ Սիւլիոնին։

ԼՕՆԴՕՆ։ Պլիմուտում, «Օրնմի» նաւի վրա պատահած ժանտախտային կարծված դէպքի մանրակրկիտ հետազօտութիւնը, կատարված տեղական կառավարչական հիմնարկութեան էքսպերտ—բակտերիոլոգների միջոցով, ապացուցեց, որ այս դէպքը ժանտախտային չէ։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Տեղական ինքնավարութեան դէպարտամէնտի նախագահ Լոնդ կարծիք յայտնեց, թէ Կոխի թէօրիան մարդկային թոքախտի անասնական թոքախտից տարբեր լինելու մասին ներկայ ժամանակում չէ կարող ընդունված համարվել գիտական աշխարհից։ Այս հարցը կը պահանջէ մանրազնին հետազօտութիւն, եւ նա չէ կարող խոստանալ, որ կառավարութեան կողմից ձեռք կառնվեն միջոցներ Կոխի թէօրիայի հիման վրա։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէր հեռագրում է Պրետորիայից, թէ Գարրատի զօրաբաժնի հեծելները յուլիսի 8-ին յարձակումն գործեցին բօէրական սայլախմբի վրա Բէյցբուրգի մօտ, գերի վերցրին 25 մարդ եւ գրաւեցին մի քանի սայլեր։ Անգլիացիների կողմից վիրաւորված են երկու օֆիցեր եւ վեց զինուոր։

ԲԵՐԼԻՆ. «Post» հաւատացնում է, թէ «Deutche Gertner Zeitung»-ի հաղորդած տեղեկութիւնները մաքսային ենթադրված գների մասին կարտօֆիլի եւ այգու զանազան արտադրութիւնների վերաբերմամբ՝ լոկ երեւակայութիւն են եւ չեն կարող յենվել մինչեւ անգամ պատրաստված աշխատանքների վրա։ «Kreiz-Zeitung»-ի ասելով՝ մաքսային տարիֆին վերաբերեալ օրէնքի նախագիծը այսօր կամ վաղը կը հրատարակվի «Reichsanzeiger»-ում։

ՍՄՈԼԵՆՍԿ։ Յուլիսի 11-ին Մեծ-Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ ժամանեց Սմոլենսկ։ Կայարանում ընդունելով վարչութեան ներկայացուցիչներին եւ պատուաւոր պահակախումբը, Նորին Բարձրութիւնը մեկնեց հետեւակների առաջին դիվիզիայի բանակը։ Մանրաժամանօրէն նայելով բոլոր զօրքերի բռնած տեղերը, զօրքերի Օգոստափառ հրամանատարը աղմկայոյզ նշանով դուրս կանչեց Կոպորեան 4-որդ գունդը եւ զօրախաղ կատարեց։ Այցելելով զինուորական գերեզմանատունը եւ հիւանդանոցը, Նորին Բարձրութիւնը գնաց մայր եկեղեցին, ուր ներկայ եղաւ կարճ ժաղթանքի եւ համբուրեց Սմոլենսկի Աստուածածնի պատկերը։ Նարվեան գնդի զօրանոցները նայելուց յետոյ, Մեծ-Իշխանը ճանապարհ ընկաւ դէպի Օրեոլ։ Ազգաբնակութիւնը ամենուրեք ոգեւորված ողջունում էր Օգոստափառ հիւրին։

ԿԻԵՎ։ Տեղի ունեցաւ այն ժողովրդական տան հիմնարկութիւնը, որ շինում է գրագիտութեան ընկերութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Ի պատիւ պրոֆէսսոր Կոխի տուած ճաշի ժամանակ, ժողովրդական առողջութեան մասին հոդացող՝ արքայական ինստիտուտի նախագահ պրոֆէսսոր Բօբէրտ Սմիտ մեղալ եւ դիպլոմ մատուցեց գերմանացի գիտնականին, որպէս ինստիտուտի պատուաւոր անդամի։

ԼՕՆԴՕՆ։ Վէյխայվէյից հաղորդում են, թէ նաւահանգիստն ամրացնելու բոլոր աշխատանքները այնտեղ գադարեցրած են։ Վաճառականները եւ հողատէրերը զայրացած են այս հանգամանքից, որովհետեւ երկիւղ են կրում, որ քիչ ժամանակ առաջ ձեռք բերած իրաւունքները բաւականաչափ պաշտպանված չեն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—6—7 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Կ. Ի. Գզելիեվ—7—8 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մաղերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բազում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անվճարապէս՝ պօստով։ 41—100

ԱԼԵՎԵՐԴԵԱՆ ԳԷՈՐԳԻ

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅ

աշխատասիրութիւնը, 172 երես

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Ծախվում է Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում։ 6—10

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ

գրախանութում վաճառվում է

«Էվէլինա», Գրիգոր Արծրունու, գինը—50 կ.
Նոյնը ռուսերէն, թարգ. Դաստակեանի—70 կ.
«Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւնը», Գրիգոր Արծրունու, գինն է 20 կ.
Նոյնը ռուսերէն, թարգմ. Հ. Առաքելեանի 25 կ.

Դիմել՝ Книжный магазинъ Гуттенбергъ, Лорисъ-Меликовская, № 11, Г. Галустяну. 1—10

ՀՐԱՒԷՐ

Վաղը, կիրակի օր, ամսոյս 15-ին, կէսօրվայ 12 ժամին, երկրորդ անգամ յարգոյարար հրաւիրվում են ս. Նշան եկեղեցու բարեպաշտ ծխականները յիշեալ եկեղեցին՝ երէցփոխի 1900 թուի եկեղեցու հաշուեմատեանը քննելու։

Գործակալ ա. մ. Թիֆլիսի՝
Զաքարիա քահ. Զարդեղեանց

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ՆԱՄՈՒՍ

վէպի հրատարակութիւնը, հեղինակի Թիֆլիսից բացակայութեան պատճառով, էլի քիչ կուշանայ։ Բաժանորդագրութիւնը շարունակվում է։ Բաժանորդագինն է 1 րուբլի։ 6—6

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

մաթեմատիկական առարկաների համար հարկաւոր է համալսարանական ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ չաբաթական 18 դասով. ռոճիկը 1500 րուբլի։

Ցանկացողները կարող են դիմել Թիֆլիս, ս. Սարգիս, Գարեգին վարդապետ Յովսէփեանին։ 2—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ ժամանակիական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։

Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հատրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակ կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Յովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (ս. ռ.) 10—25

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, բժ. Վ. Արծրունու	75 կ.
ՎԱՏ ՅԱՒ » » »	6 »

Շուտով լոյս կը տեսնի «ՄԻ ԽՄԻՐ», երկրորդ տպագրութիւն։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну. 5—10

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XIII շրջան

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան»

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ԳԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ԳԱՐԱՊՄՈՒՆԳԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետեսութեան։
Բ) Առեւտրական թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։

Պարապմունքները սկսվելու են 1901 թուի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՒՍ ամսից յետոյ։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ

Ցանկացողները թող դիմեն դրատոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեւսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մոտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը դնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ 5—25

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին ժամանակիական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատտեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն հատրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Յովհաննեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. շ.) 5—25

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Іюля 1901 г.
Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.